առաջնորդական գահի տէրը Խաչատուր Իլովացին էր 1492–1502 թուականներին[54]։ Վերջինս նախկինում, 1461 թուականից մինչեւ Ստեփանոս Ա-ի ընտրութիւնը 1485 թուականին (կամ գուցէ մի քիչ առաջ), արդէն Լուովի աթոռի տէրն էր եղել[55]. իսկ այժմ նրա վերաբաղմելն այդ աթոռի վրայ՝ մենք դիտում ենք Հռոմում լատինադաւանութիւն եւ պապի հպատակութիւնն ընդունած Ստեփանոսի դէմ որպէս բողոքի եւ ընդվզման ապացոյց կամ չարժուում՝ Էջմիածնի աթոռին հաւատարիմ Լուովահայերի եւ նրանց երեւելիների կողմից, եւ ոչ թէ որպէս հետեւանք այն բանի, որ Ստեփանոսը մահացած պէտք է լինէր 1492 թուականին, ինչպէս կարծում է Պետրովիչը[56]։ Ստեփանոսը շարունակում էր Լուովում ապրել անտեսուած եւ արհամարհուած վիճակում, առաջնորդական իրաւունքներից հեռու։ Խաչատրի մահից յետոյ, 1502–1515 թուականներին, աթոռը թափուր էր մնացել մինչեւ Գալատի ընտրութիւնը[57], իսկ այս տասնչորս տարուայ թափրութեան շրջանում, երբ ասպարէզում մի յարմար եւ արժանաւոր մարդ չէր հանդէս եկել առաջնորդական աթոռի համար, մեկուսացուած երբեմնի թեմակալ Ստեփանոսն, ամենայն հաւանականութեամբ, փորձ էր կատարել իր կորցրած աթոռը վերագրաւելու՝ իր կողմնակիցների եւ տեղական լատին հոգեւորականութեան օժանդակութեամբ Հռոմից ստանալով իր հաստատումը։ Եւ այս հանգամանքներում՝ Ստեփանոս Ա-ը, իր հպատակութիւնը վերահաստատելու նպատակով, պէտք է կրկին անգամ Հռոմ այցելած լինի այդ շրջանում, Խաչատուր Իլովացու մահից (1502 թ.) հաւանաբար քիչ յետոյ, երբ այնտեղ Իննովկենտիոս Ը-ի յաջորդներից Յուլիոս Բ-ն էր գտնուում քահանայապետական գահի վրայ (1503–1513 թթ.). եւ ահա այդ է, որ, մեր կարծիքով, արտայայտուած է Լուովի դամբանային արձանագրութեան մէջ, թէ «հնազանդութիւն յայտնեց գերագոյն քահանայապետ Յուլիոս Բ-ին» (Iulio Secundo Pontifici Maximo reddidit obedientiam)։

Կարծում ենք, որ սրանում է գաղտնիքը Լուովի արձանագրութեան մէջ Ստեփանոս եւ Յուլիոս Բ անուանների զուգորդման։

Բնականաբար Ստեփանոսի համար Յուլիոս Բ-ից ճանաչում ստանալը որեւէ գործնական արդիւնք չէր կարող ունենալ նրա հետապնդած նպատակի առումով, որովհետեւ լեհական պետութեան մէջ ազգային–կրօնական համայնքների կառավարման համար գոյութիւն ունէր իրաւական սահմանուած կարգ, որի համաձայն այդ համայնքներն իրենք էին ընտրում իրենց առաջնորդներին եւ Լեհաստանի թագաւորները պարզապէս վաւերացում էին տալիս նրանց[58]. եւ այդ իրաւունքի հիման վրայ էլ Լուովի «հերձուածող» հայութիւնը, իր «հերձուածող» երեւելիների ղեկավարութեամբ, նախընտրեց մնալ առանց առաջնորդի՝ մինչեւ 1515/16 թուականները, քան առաջնորդական աթոռը կրկին յանձնել լատինադաւան Ստեփանոսին։

Թէ ե՞րբ է մահացել Ստեփանոս Ա-ը, այդ մասին ոչ մի տեղեկութիւն չկայ հայկական եւ լեհական աղբիւրներում։ Հաւանաբար չափազանցութեան մէջ ընկած չենք լինի, եթէ ընդունենք, որ նա մօտ 90 տարեկան հասակում մահացած լինի 1551 թուականի յունուարին. իսկ դա լիովին հնարաւոր է։ Ինչպէս տեսանք՝ Ստեփանոսը Լուովի աթոռի վրայ էր 1485 թուականին (հաւանաբար նոր էր ընտրուել). իսկ եթէ այդ ժամանակ եղած լինէր մօտ 25 տարեկան, ապա 1551 թուականի յունուարին կը լինէր 90 տարեկան։ Ենթադրենք՝ լինէր նոյնիսկ 95 տարեկան։ Եւ ամենեւին տեղի չկայ կասկածելու, որ մեզ ծանօթ դամբանային արձանագրութեան մէջ

---

54 PChA p. 67 – 74 e 77.

55 Տես եւ հմմտ. Ստ. Ռոշքա, էջ 158 – 161։

56 PCha p. 77.

57 Ibidem, p. 78 – 84.

58 Լեհահայերի ինքնավարութեան իրաւունքի մասին նիւթեր շատ կան։ Վերջին եւ լաւագոյն ուսումնասիրութիւններից մէկն է՝ G. Petrowicz, «L'organisation juridique des Arméniens sous les monarques polonais», *Revue des Études Arméniennes*, Paris, nouv. série, t. IV, 1967, p. 321-354.